ՆԱԽԱԳԻԾ

2-ՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿ

Կ-039-22.09.2021-ՏՀ-011

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

## «ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված 1.*** «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» 2006 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՕ-233-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասում վերջին պարբերությունից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր պարբերություններ.

«Օդանավակայանի տաքսի ծառայություն՝ օդանավակայանների տաքսի ծառայության կազմակերպման լիցենզիա ունեցող իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից ուղեւորների փոխադրման գործունեություն.

Օդանավակայանի տաքսու կայանատեղ՝ օդանավակայանի տաքսի ծառայություն մատուցող մարդատար-տաքսի ավտոմոբիլների կայանման համար առանձնացված տարածք:»:

***Հոդված 2.*** Օրենքի 17-րդ հոդվածի՝

1. 2-րդ մասի «ա» կետում «տաքսամետրով (սակաչափիչով)» բառերը փոխարինել «սակաչափիչով» բառով:

2. 4-րդ մասից հետո լրացնել նոր 5-րդ, 6-րդ, 7-րդ եւ 8-րդ մասեր հետեւյալ բովանդակությամբ.

«5. Օդանավակայանների տարածքներում տաքսի ծառայությունների մատուցումն իրականացվում է տաքսու կայանատեղերից, կամ տրանսպորտային միջոցների կանգառի համար նախատեսված վայրերից՝ ուղեւորների կողմից իրականացված պատվերներով:

6. Օդանավակայանների տարածքի տաքսու կայանատեղերից ծառայություն կարող են մատուցել միայն այն կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը, ովքեր ունեն օդանավակայանների տաքսի ծառայության կազմակերպման լիցենզիա, որի ձեւը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7. Օդանավակայանի տաքսի ծառայության լիցենզիա տրվում է միայն այն կազմակերպություններին եւ անհատ ձեռնարկատերերին, որոնք ունեն մինչեւ յոթ տարեկան, սպիտակ հիմնագույնի, գործարանային վառելիքային համակարգով շահագործվող, «Աէրոտաքսի» գրառմամբ եւ տաքսու շախմատաձեւ տարբերանշանով արտաքին կահավորում և սակաչափիչ ունեցող ավտոմոբիլներ:

8. Օդանավակայանի տաքսի ծառայություն մատուցող իրավաբանական անձինք եւ անհատ ձեռնարկատերերը պետք է պահպանեն օդանավակայանի Կառավարչի կողմից սահմանված եւ կիրառվող օդանավակայանի շահագործման հետ կապված կանոնակարգերի պահանջները»:

***Հոդված 3.*** Օրենքի 18-րդ հոդվածի՝

1. 5-րդ մասի 3-րդ պարբերության «տաքսամետրի» բառը փոխարինել «ավտոմոբիլային սակաչափիչի» բառերով:

2. 8-րդ մասից հետո լրացնել նոր 9-րդ մաս հետեւյալ բովանդակությամբ.

«9. Օդանավակայանների տարածքում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով փոխադրումներ իրականացնողների կողմից տաքսի ծառայության գովազդի տարածումը կարգավորվում է «Գովազդի մասին» օրենքով:»:

***Հոդված 4.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից վեց ամիս հետո:

ՆԱԽԱԳԻԾ

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Տեղեկանք փոփոխվող հոդվածների վերաբերյալ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

## «ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ~~ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ~~ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված 1.*** «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ 2006 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՕ-233-Ն օրենքի (այսուհետ ~~օրենք~~՝ Օրենք) 4-րդ ~~հոդվածը~~հոդվածի 1-ին մասի վերջին պարբերությունից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր ~~պարբերությամբ~~պարբերություններ.

«Օդանավակայանի տաքսի ծառայություն՝ ~~«Ա» տիպի~~ օդանավակայանների տաքսի ծառայության կազմակերպման լիցենզիա ունեցող իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից ուղեւորների փոխադրման գործունեություն~~:»:~~.

Օդանավակայանի տաքսու կայանատեղ՝ օդանավակայանի տաքսի ծառայություն մատուցող մարդատար-տաքսի ավտոմոբիլների կայանման համար առանձնացված տարածք:»:

***Հոդված 2.*** Օրենքի 17-րդ հոդվածի՝

1. 2~~.~~-րդ մասի «ա» կետում «տաքսամետրով (սակաչափիչով)» բառերը փոխարինել «սակաչափիչով» բառով:

2. 4-րդ մասից հետո լրացնել նոր 5-րդ, 6-րդ, 7-րդ եւ ~~7~~8-րդ մասեր հետեւյալ բովանդակությամբ.

«5. Օդանավակայանների տարածքներում տաքսի ծառայությունների մատուցումն իրականացվում է տաքսու կայանատեղերից, կամ տրանսպորտային միջոցների կանգառի համար նախատեսված վայրերից՝ ուղեւորների կողմից իրականացված պատվերներով:

6. Օդանավակայանների տարածքի տաքսու կայանատեղերից ծառայություն կարող են մատուցել միայն ~~«Ա» տիպի լիցենզիա ունեցող~~այն կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը, ովքեր ունեն օդանավակայանների տաքսի ծառայության կազմակերպման լիցենզիա, որի ձեւը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7. Օդանավակայանի տաքսի ծառայության լիցենզիա տրվում է միայն այն կազմակերպություններին եւ անհատ ձեռնարկատերերին, որոնք ունեն մինչեւ յոթ տարեկան, սպիտակ հիմնագույնի, գործարանային վառելիքային համակարգով շահագործվող, «Էլրոտաքսի» գրառմամբ եւ տաքսու շախմատաձեւ տարբերանշանով արտաքին ~~ու սույն հոդվածի 2-րդ մասի «ա» եւ «գ» կետերի պահանջներին համապատասխան ներքին~~ կահավորում և սակաչափիչ ունեցող ավտոմոբիլներ~~:»:~~:

8. Օդանավակայանի տաքսի ծառայություն մատուցող իրավաբանական անձինք եւ անհատ ձեռնարկատերերը պետք է պահպանեն օդանավակայանի Կառավարչի կողմից սահմանված եւ կիրառվող օդանավակայանի շահագործման հետ կապված կանոնակարգերի պահանջները»:

***Հոդված 3.*** Օրենքի 18-րդ հոդվածի՝

1. 5-րդ մասի 3-րդ պարբերության «տաքսամետրի» բառը փոխարինել «ավտոմոբիլային սակաչափիչի» բառերով:

2. 8-րդ մասից հետո լրացնել նոր 9-րդ մաս հետեւյալ բովանդակությամբ.

«9. Օդանավակայանների տարածքում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով փոխադրումներ իրականացնողների կողմից տաքսի ծառայության գովազդի տարածումը կարգավորվում է «Գովազդի մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ օրենքով:»:

***Հոդված 4.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական ~~հրապարակման օրվան հաջորդող վեցերորդ ամսվա մեկից~~հրապարակումից վեց ամիս հետո:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-039 -22.09.2021-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

| № | Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը | Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը | Առաջարկություն (փոփոխություն, լրացում) | Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը | Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը |
|---|---|---|---|---|---|
| «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ | | | | | |
| 1. | ՀՀ կառավարություն | վերնագիր | Նախագծի վերնագրից հանել կրկնվող «Հայաստանի Հանրապետության» բառերը<br><br>«ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ» բառն անհրաժեշտ է փոխարինել «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բառով | Ընդունվել է | Ընդունվել է |
| 2. | | 1-ին հոդված | 1-ին հոդվածից «Հայաստանի Հանրապետության» բառերը | Ընդունվել է | Ընդունվել է |
| 3. | | 1-ին հոդված | «(այսուհետ օրենք)» ձեւակերպումն առաջարկում ենք փոխարինել «(այսուհետ՝ Օրենք)» ձեւակերպմամբ | Ընդունվել է | Ընդունվել է |
| 4. | | 1-ին հոդված | «հոդվածը» բառն անհրաժեշտ է փոխարինել «հոդվածի 1-ին մասում» բառերով | Ընդունվել է | Ընդունվել է |
| 5. | | 1-ին հոդված | «պարբերությամբ» բառը փոխարինել «պարբերություններով» բառով | Ընդունվել է | Ընդունվել է |
| 6. | | 1-ին հոդված | հոդվածը լրացնել նոր պարբերությամբ հետևյալ բովանդակությամբ՝ «Օդանավակայանի տաքսու կայանատեղ՝ օդանավակայանի տաքսի ծառայություն մատուցող մարդատար-տաքսի ավտոմոբիլների կայանման համար առանձնացված տարածք:»:» | Ընդունվել է | Ընդունվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 7. | | 1-ին հոդված | 1-ին հոդվածի առաջին պարբերությունից և 2-րդ հոդվածի 6-րդ կետից հանել «Ա» տիպի» բառերը, ներկայացնել նոր խմբագրությամբ | Ընդունվել է | Ընդունվել է |
| 8. | | 2-րդ հոդված | Հոդվածը լրացնել 1-ին կետով հետևյալ բովանդակությամբ՝ «1. 2-րդ մասի «ա» կետում «տաքսամետրով (սակաչափիչով)» բառերը փոխարինել «սակաչափիչով» բառով:» | Ընդունվել է | Ընդունվել է |
| 9. | | 2-րդ հոդված | 6-րդ մասը խմբագրել և սահմանել որ լիցենզիայի ձևը սահմանում է կառավարությունը | Ընդունվել է | Ընդունվել է |
| 10 | | 2-րդ հոդված | 7-րդ մասում՝ «արտաքին ու սույն հոդվածի 2-րդ մասի «ա» եւ «գ» կետերի պահանջներին համապատասխան ներքին կահավորում ունեցող ավտոմոբիլներ:»:» բառերը փոխարինել «արտաքին կահավորում և սակաչափիչ ունեցող ավտոմոբիլներ» բառերով հաշվի առնելով 2-րդ հոդվածի 1-ին կետը | Ընդունվել է | Ընդունվել է |
| 11 | | 2-րդ հոդված | 2-րդ կետում «և 7-րդ» բառերը փոխարինել «,7-րդ և 8-րդ» բառերով և կետը լրացնել նոր 8-րդ մասով հետևյալ բովանդակությամբ՝ «8. Օդանավակայանի տաքսի ծառայություն մատուցող իրավաբանական անձինք եւ անհատ ձեռնարկատերերը պետք է պահպանեն օդանավակայանի Կառավարչի կողմից սահմանված եւ կիրառվող օդանավակայանի շահագործման հետ կապված կանոնակարգերի պահանջները»:» | Ընդունվել է | Ընդունվել է |
| 12 | | 3-րդ հոդված | Օրենքի 18-րդ հոդվածում լրացվող նոր՝ 9-րդ մասում «Գովազդի մասին» օրենքի անվանման հիշատակման «Հայաստանի | Ընդունվել է | Ընդունվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Հանրապետության» բառերը հանել | | |
| 13 | | 4-րդ հոդված | Հստակեցնել օրենքն ուժի մեջ մտնելու ժամկետները՝ հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի դրույթները:<br>Նույնը վերաբերում է նաև փաթեթում ընդգրկված մյուս օրենքների նախագծերին | Ընդունվել է | Ընդունվել է |
| **«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ** | | | | | |
| 14 | | վերնագիր | Վերնագրում օրենքի անվանման հիշատակման երկրորդ և 1-ին հոդվածում հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը | Ընդունվել է | Ընդունվել է |
| 15 | | 1-ին հոդված | նախագծի 1-ին հոդվածից հանել «(այսուհետ՝ Օրենք)» բառերը, իսկ «ենթակետով» բառը փոխարինել «պարբերությամբ» բառով | Ընդունվել է | Ընդունվել է |
| 16 | | 2-րդ հոդված | Հստակեցնել օրենքն ուժի մեջ մտնելու ժամկետները՝ հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի դրույթները | Ընդունվել է | Ընդունվել է |
| **«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ** | | | | | |
| 17 | | վերնագիր | Օրենսգրքի լրիվ անվանման հիշատակումը համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներին | Ընդունվել է | Ընդունվել է |
| 18 | | 1-ին հոդված | հանել «(այսուհետ՝ Օրենսգիրք)» բառերը | Ընդունվել է | Ընդունվել է |
| 19 | | 1-ին հոդված | օրենսգրքի 137.2-րդ հոդվածի 9-րդ մասից հետո լրացվող նոր՝ 10-րդ մասով սահմանված կարգավորումը նախատեսել «7.1- | Ընդունվել է | Ընդունվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ին» մասի տեսքով՝ կատարվող լրացման տեքստն ներառելով չակերտներում: | | |
| 20 | | 2-րդ հոդված | Հստակեցնել օրենքն ուժի մեջ մտնելու ժամկետները՝ հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի դրույթները | Ընդունվել է | Ընդունվել է |
| **«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ** | | | | | |
| 21 | | վերնագրում | Օրենքի անվանման հիշատակման երկրորդ և 1-ին հոդվածում «Հայաստանի Հանրապետության» բառերը հանել | Ընդունվել է | Ընդունվել է |
| 22 | | 1-ին հոդված | 1-ին հոդվածի պարբերության մեջ և աղյուսակում «6-րդ» բառերը փոխարինել «7-րդ» բառերով, աղյուսակը ներառելով չակերտներում: | Ընդունվել է | Ընդունվել է |
| 23 | | 1-ին հոդված | հանել «(այսուհետ՝ Օրենք) Օրենքի» բառերը | Ընդունվել է | Ընդունվել է |
| 24 | | 2-րդ հոդված | Հստակեցնել օրենքն ուժի մեջ մտնելու ժամկետները՝ հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի դրույթները | Ընդունվել է | Ընդունվել է |